ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութուն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

07/11/2019 - 22/11/2019

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 2 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 2 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

8 կողմ

2 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

22/11/2019

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1566-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Վահե Եղոյան 08.11.2019 17:42:24	Ցանկալի կլիներ 2020թ. հունվարի 1ից լիներ	Նախագծով առաջարկվող՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերի փոփոխությունը նպատակ ունի մեղմելու նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները և հանդիսանում է ժողովրդագրական իրավիճակի բարելավման քայլերից մեկը: Ըստ այդմ, նախագծով որոշակի ժամանակահատված է	

			տրվել՝ երեխայի ծնունդը պլանավորելու համար: Նոր կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետը պայմանավորված է նաև բյուջետային հոսքերի կազմակերպման հնարավորություններից՝ հաշվի առնելով, այն հանգամանքը, որ խնդրո առարկա միջոցառումը նախաձեռնվել է ՀՀ 2020 թ. պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների ավարտից հետո:
2	Տիգրան Սարաֆյան 07.11.2019 15:32:50	Անհրաժեշտ է վերանայել 25500 նպաստի չափը, քանի որ այն վերցվել է նվազագույն թոշակի թիվը զուտ մեխանիկորեն տեղափոխելու եղանակով, որի սահմանված չափը ևս հիմնավորման խնդիր ունի, այն վերցվել էր որպես պարենային զամբյուղի թիվ: Քանի որ գործ ունենք երեխաների նպաստի հետ, նշենք որ, համաձայն ՀՀ ԱՎԿ տվյալների նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի 2019թ.	Տեղեկացնում եմ, որ 2019թ. հունվարի 1-ից նվազագույն կենսաթոշակի չափը սահմանվել է 25500 դրամ՝ հաշվի առնելով 2019 թվականի համար կանխատեսված պարենային (ծայրահեղ) աղքատության գիծը (25500 դրամ): Ըստ այդմ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը նախագծով առաջարկվում է 2020թ. հուլիսի 1-ից սահմանել

Երրորդ եռամսյակի հաշվով կազմել է 60 394 դրամ, որից պարենային զաբյուղի արժեքը կազմում է 34 121 դրամ: նույն ցուցանիշները 2019թ. երկրորդ եռամսյակի հաշվով կազմել են՝ 63 634 դրամ և 35 951 դրամ: 2019թ. առաջին եռամսյակի հաշվով կազմել են՝ 63 555 դրամ և 35 906 դրամ: 2018թ. Չորրորդ եռամսյակի հաշվով կազմել են՝ 61 113 դրամ և 34 527 դրամ: Այս ցուցանիշները ըստ եռամսյակների են և տարեկան միջինով չեն հաշվարկվում և տատանվում են: վերոնշյալ տվյալներից ելնելով միջինացված կազմում են՝ 62174 դրամ և 35126 դրամ: Հետևաբար կարիք կա նախատեսվող ցուցանիշը և հիմնավորելու՝ չափանիշների հիման վրա սահմանելու, և բովանդակային կողմն ու նպատակային հասցեականությունն ապահովելու, թեկուզև դա հանգեցնի բյուջետային ծախսերի ավելացման:	25500 դրամ, որը փոխկապակցված է պարենային (ծայրահեղ) աղքատության գծին: